ՀԱՐՑԱՓՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆԴԷՍ ՊԱՄԳԵՒԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ներկայ ամսոյս 9 էն սկսեալ մինչև քառն Ս. Աթոռոյս Ժառանգաւորաց Վարժարանի տարեկան հարցաքննութիւնը տեղի ունեցաւ և 22էն սկսեալ մինչև 27 երեք աշակերտաց համար, այն է Գէորգ Տ. Յարութիւնեան Խամնկեցի, Կարապետ Թովմասեան Զանագ–Գալէցի և Թադէոս Գրիգորեան Աղրիանուպոլսեցի, ընդ հանուր հարցաքննութիւն եղաւ հետեւեալ առարկաներուն, որք են

1. Հին և Նոր Կտակարանի Պատմութիւն։
2. Բարոյախօսութիւն։
3. Պատմութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ։
4. Հին դարու պատմութիւն։
5. Բնապատմութիւն։
6. Բնագիտութիւն։
7. Թուաբանութիւն։
8. Աշխարհագրութիւն։
9. Գրահաշիւ։
10. Գծագրութիւն։
11. Երաժշտութիւն (ձայնական)։
12. Հայկաբանութիւն։
13. Գաղղիարէն։
14. Տաճկերէն։

Հարցաքննութեանց՝ զանազան Գերապատիւ Ս. Հայրեր ուսումնասիրաբար ներկայ գտնուելով՝ հարցաքննեցին աշակերտները. իսկ Տաճկերէնի օրերը Տեղւոյս Բիւշտիի Տնօրէն գաւառու Իսա Էֆէնտին որ յատկապէս հրաւիրուած էր, բարեհաճեցաւ ներկայ գտնուիլ և հարցաքննել, որոց ազնուն շնորհակալ լինել բաղդը պարտք կը համարիմք։

Աշակերտաց պատասխանատուութենց և տարեկան աշխատասիրաբար ընթացքն մի չեմք ասեր, այլ իւրաքանչիւր ընտիրցաւէր ազգային կամ ծնող, կարող է աշակերտաց կարգաւորութիւնը կամ վիճակին իմանալ։ Սիրելի վերջը գրուած աշակերտաց ըստ հարցաքննական պատասխանատուութեան և ըստ աշխատասիրութեան ունեցած արժէքից վիճակացոյցին։ Բայց պրոֆիտեւրնգ հանուրքնութիւն ուստ աշակերտաց անուններն չեն գրուած վիճակացոյցին մէջ, նոցա մասին այսչափ բաւել հարկ կը համարիմք, որ յիշեալ երեք աշակերտներն առաւել կամ նուազ իրարմէ յաջողակութեամբ անցուցին իրենց ընդ հանուր հարցաքննութիւնը։ Այն աշակերտաց ընդ հանուր հարցաքննութիւնը ոչ թէ վարժարանի Ծրագրին նկատմամբ է, զոր ամբողջացնելու համար երկու տարի պէտք էր, այլ իրենց գաս առածներուն նկատմամբ։ Որոց վերջագոյն պէտք տրուի Սուրբ Աթոռոյս Ուսումնական խորհրդոյ կողմէն։

Իսկ ամսոյս 28 ին Պարզեւաբաշխութեան հանդէսն կատարուեցաւ. ուր բաց 'ի Ս. Աթոռոյս Ամենապատիւ Ս. Նախագահէն և Գրիգ. Մինասեան Ս. Հայրերէն ներկայ էր Քաղաքիս Կառավարիչ Վսեմ. Քեռամիլ փաշան։ Հանդէսին մէջ Հայերէն, Գաղղիարէն և Տաճկերէն ճառեր կարդացուեցան աշակերտաց կողմէն. Հայերէն ճառերէն մին 'ի սարգեւ պիտի դնեմք 'ի քաջալերութիւն. յետ ճառախօսութեանց՝ իւրաքանչիւր աշակերտի արժանեաց համեմատ պատրաստուած Մրցանակներն բաշխուեցան, յետոյ Վսեմ. Քեռամիլ փաշան համառօտ խօսքով մը իւր շնորհակալութիւնը յայտնեց։

Այնուհետեւ Ս. Պատրիարքն ուս-

digitised by A.R.A.R.@

ման կարեւորութիւնը բացատրելով՝ յարգելոց աշակերտներն, որ առաւել եւս յառաջադիմելով՝ Ս Աթոռոյն եւ Ազգին յոյսը պատկին։ Իւր խօսքը կնքեց յատուկ բարեմաղթութեամբ Օգաստափոր Կոյսեր կենաց համար եւ շնորհակալութեամբ Քեամիկ փաշային, որ հաճած էր իւր ներկայութեամբ պատուել Վարժարանը։

ԲԱՐԵԽՆԱՄ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐ

ԵՒ ՎՍԵՄԱԲՈՀ ՈՒՆԿՆԴԻՐՔ

Կանցնի տխուր ձմեռն, կը հալին ցրտաստաբուռ սառնամանիք, կը դադարին փքաշունչ եւ ձիւնաբեր հողմերն, եւ կը գայ կը ժամանէ զուարճալից ամառն, տարուոյն այն գեղեցկառոյգ եւ չքնաղ եղանակն, յորում այդեստանք իրենց կանաչազարդ որթերու ծիրանափայլ ողկոյզներն, պարտէզք իրենց ծառերու քաղցրահամ եւ կենդանաբար պտուղներն եւ արտոյք իրենց ցորեններու ոսկեփունջ հասկերն հեւազհեւ կը նուիրեն քրանաթոր եւ վառատակաբեկ մշակին 'ի փոխարէն նորա թափած երկանց և աշխատութեանց, և իրենց բերքերու արդիւնաւորութեան և կամ անարդաւորութեան հաճելիտ կը վայելեն աշխատասէր մշակին խնամքն, եւ կամ կ'արժանանան լոկ նորա սառն արհամարհանաց։

Ահա եկաւ հասաւ եւ ժամանակն յորում ժառանգաւոր սանուցս սոյն բանաւոր դարաստանի անկերը՝ որք բեկորք են Հայ — Ազգութեան ոստաքանց, այլ հատուածատ ծառայն, եւ եռանդն 'ի սիրտ 'ի մի համախմբեալ են սան՝ Ս. Սարգիսի նուիրական բարձանց վերայ իրենց ուսումնասիրութեան առատապէս յոգուլոյ եւ ձարակ գանելու, շնորհիւ և անխոնջ խնամքիւ միաբանական Ս. Ուխտիս, աւարտելով իրենց տարեկան հարցաքննութիւնը պիսի ընդունին իրենց աշխատութեանց արժանաւոր պտուղն ու բարիքն, այն բարիքն՝ որ հոգոյ խիստ մ'է ուսանողաց 'ի յառաջադիմութիւն անգր հակայաքայլ ընթանալու։ Վասն զի ինչպէս իրաց քննութիւնը ամենայն ինչ իւր էական խակութեամբ կրպատկերացնէ մարդկային մտաց, մերկացընելով զայն խաբուսիկ աւելութիւնէրէ և ճշմարտութեամբ դիմակաւորուած պաճուճանքներէ։ այսպէս եւս ուսանողաց հարցաքննութիւնը խելամուտ կ'առնէ ունկնդիրները մէն մի ուսանողաց ուման իւրաքանչիւր ճիւղին մէջ ունեցած յառաջադիմութեան և կամ յետադիմութեան։ եւ միով բանիւ նոցա իւրաքանչիւրին մտաւորական զարգացման ճշգրիտ չափն ու ասոյնճանը իւր էութեամբ կը ներկայացընէ հանդիսականաց։ Եւ այսպէս Ս. Ուխտիս միաբանութիւնը, որ Ազգին իրեն յանձնուած նուիրական անգին աւանդն, այն է այն բանաւոր պարտիզն խնամակալ կարգուած է, և որ ամեն ջանք, խնամք և քիրտն թափած և ամեն զոհողութիւն ըրած է բանական պարտիզն բնաշնաւոր և արդասաբեր մշակութեանը համար, յանդգնով պատելով, ձողաբարձ զարդարելով, աշտարակ կառուցանելով, գուբ հրձան փորելով, հեռաւոր, երկիրներու տեսակ տեսակ ծառերով զարդարելով, հանապազ նոցա հոգը բրելով, պարարտացնելով, ստէպ ջրով ոռոգանելով, փութաջան մշակներու ձեռքը յանձնելով, վերջապէս սոյն բանական պարտիզն մտաւոր ու բարոյական զարգացման հանրական եւ համին-

digitised by A.R.A.R.@

թաց յառաջադիմութիւնը հոգւով և սրտով աշխատելով. ահա իւր հարցաքննութիւնը աւարտած տեղեկագրաւ և լիովին խելամուտ եղաւ թէ այդ եղբայրն իւր տաժանելի և վատակրեկ աշխատութիւնք և քիրտն արդիւնաւոր եղած էին, թէ ապարդիւն, քանի է պարտիզս իւրաքանչիւր անկոյն ներկոյ արգասաբերութեան կշռեն և անցեալ տարիներու բաղդատութեամբ տարբերութիւնը, և թէ գանուած են այնպիսի տեղեր եւս ոչ հետաղ գտնուելով մշակին թափած երկանց և խնամոց ոչ թէ միայն բարի պտուղ չեն բերած, այլ մանաւանդ դժնիկ և փուշ։

Ս. Ուխտիս միաբանութեան հարցաքննութեամբ գպրոցիս հանրական մշակութեան համար առած տեղեկութիւնը խիստ հարկաւոր էր և օգտակար։ Վասն զի եթէ աշխատութեան ապարդիւնաւորութիւնը կը լքուցանէ մարդոյ սիրտն, կը խորտակէ նորա հոգւոյն արիութիւնը եւ զօրութիւնը, և հիմն 'ի վեր կը տապալէ նորա յուսոյն տաճարի բարձր շէնքը, ընդ հակառակն աշխատութեան արգասաբեր արդիւնաւորութիւնը մարդոյ հոգին կը զմայլեցնէ, նորա սիրտն կը թրթռացնէ երկնային ուրախութեան բաբախմամբ, և կը ներշնչէ արիութիւն և նորագ զօրութիւն իւր գործոց մէջ յարատեւելու և իւր նպատակին հասնելու։ Ի՞նչ մեծ ուրախութիւն և անպայման հրճուանք է մշակի մը համար, երբ հունձքի ժամանակ կը տեսնէ որ իւր ցանած սերմերը տասնապատիկ և հարիւրապատիկ արդիւնաւոր եղած են։ Այնուհետեւ փոխանակ երկու կամ երեք արտ վարելու ձեռք կը զարնէ նոցա կրկինին մշակութեան, վասն զի ցանած սերմանց արգասաւորութիւնը կը քաջալերէ գինքը։ Այսպէս եւս Ս. Ուխտս միաբանական եղբայրութիւնը սւսանողաց քննութեան մէջ, որ հունձքի ժամանակամիջոց մը ըսել է, տեսնելով իւր ցանած բարոյական և մտաւորական զարգացման սերմանց արգասաբեր պտղաբերութիւնը, կ'ուրախանայ անշուշտ, կը քաջալերուի անխոնջ մշակին նման և այնուհետեւ գպրոցիս յառաջադիմութեան մասին իւր ջանքն ու խնամքը կը բազմապատկէ։ Բաց 'ի այս մեծ օգտէն, զոր կը մատակարարէ հարցաքննութիւնը, ունի մի այլ օգտակարութիւն եւս 'ի մասին ուսանող աշակերտաց. այսինքն ինչպէս որ հարցաքննութեան մէջ ուսուցիչք և դաստիարակք լիովին խելամուտ կը լինին իրենց ջանից արդիւնաւորութեան և ապարդիւնաւորութեան, այսպէս եւս յառաջադիմ մանկունք տեսնելով իրենց աշխատութեանց պտղին՝ կը քաջալերուին և այնուհետեւ անխոնջ աշխատութեամբ և տոկուն հաստատամտութեամբ ուսման ընդարձակաւալ ասպարիզին մէջ իրենց արշաւանացն խոչընդոտն եղող որ և է արգելքներու կը յաղթեն։ Իսկ տիարները տեսնելով յառաջադիմ աշակերտաց փառք և գովութեամբ դրուատելն եւ իրենց այն գովասանքներէն զուրկ լինելն՝ կը վառին 'ի սիրտ և 'ի հոգի, որով և կը ծնանի իրենց մէջ ընկերին փառաց և պատուոյն մասնակցելու բարի և գովանի նախանձաւորութիւն մի, նախանձաւորութիւն մի՝ որ միակ մտրակն է բուռն բերմամբ 'ի յառաջադիմութիւն անդր երթալ ընթացս արշաւելու։

Եւ այսպէս ահա երկուքն լիովին պարտականութեամբ, ուսանողք իրենց ջանքն ու եռանդը, իսկ ուսուցիչք և դաստիարակք իրենց խնամքը կրկնապատկելով՝ կը պակուն այն մի-

digitised by A.R.A.R.@

սեմ նպատակն, որ մատաղերամ տա-
նուցս բովանդակ յոյսն ու միսիթա-
բութիւնն է, և որ այնքան լուսաւոր
կը փայլի մեր մտաց հորիզոնին վերայ,
ինչպէս արփին ոսկեմինչիկ երկնից կա-
պուտակին վերայ։

Ուրեմն ամ սիրելի եղբայրք իմ,
կրկնապատկենք մեր քիրան ու աշխա-
տութիւնք մեր նպատակին հասնելու
համար. վասն զի աշխատութեան եւ
գործունէութեան բաղուկներն ամե-
նէն հզօր պատուարներն անգամ կը
կործանեն։ Մեր յարատեւ ջանքով
արժանի ընենք զմեզ Սուրբ Աթոռոյս
խնամոցն՝ որոյ գիրկը կը սնանիմք նիւ-
թապէս և բարոյապէս։ Մեր վսեմ և
նուիրական կոչման համեմատ այնպէս
պատրաստենք զմեզ որ Ազգութեան
ամենամեծ յոյսն արդեամբ պսակուի։
Վասն զի Ազգն կ'ակնկալէ որ ինչպէս
երբեմն Աւետարանական փրկարար
լոյսը Առաքելոց ձեռամբ Սաղիմի բար-
ձունքներէն ճառագայթեց ընդ ողջոյս
տիեզերայնոյնպէս բարոյական և մտա-
ւորական զարգացման լոյսը տասի պիտի
ճառագայթէ մատաղերամ ոտնուցս
ձեռամբ Հայաստանի մութ խորշերն,
տգիտութիւն խաւարի հետ պատերազ-
մելու և Հայ սրտերն ուսմամբ և դաս-
տիարակութեամբ լուսաւորելու։ Վա-
սն զի ուսմունք եւ դաստիարակու-
թիւն, սոքա են դարուս յառաջադի-
մութեան խարհրդաւոր կնիքն ու նշա-
նաբանը։ Նմանող լինինք մեր երջան-
կայիշատակ նախնեաց եւ նոցա հաս-
տատամիտ ոգին փոխանցենք մեր մէջ,
որք ուսման և գիտութեան ծարաւով
պաղակած՝ կը գիմէին յԱղէքսանդրիա
եւ յայլ տեղիս օտարութեան իրենց
ուսումնասիրութիւն առատ յագուրդ
գտնելու։ Ընդունենք լիովին մեր մտաց
մէջ այն իրական ճշմարտութիւնը, որ
ի բարձունչիւ աք պարտուց անթեր
կատարմամբ միայն կարող է սիրելի լի-
նել և այլոց համարումը իւր վերայ
գրաւել։ Եթէ մեք մեր պարտքը կա-
տարենք, այն ժամանակ մեր բարեջան
ուսուցիչք և խնամակալք պիտի քա-
ջալերուին և ևս քան զևս իրենց խը-
նամքը տարածեն մեր վերայ։ Իսկ ե-
թէ հակառակ մեր վսեմ կոչման ան-
տարբեր գտնուիմք մեր արքունական պար-
տուց մէջ, այն ժամանակ ոչ միայն ա-
պերախտ պիտի գտնուիմք մեր բարե-
բարաց անխոնջ ջանիցն և քրտնաթոր
աշխատութեանց, այլ և հանուր Ազ-
գին յոյսն եւս խաբած պիտի լինիմք
և ճշգրտենք մեր վերայ Աւետարանի
անգարձ վճիռն թէ. «Ամենայն ծառ
որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի
և 'ի հուր արկանի»։

Օրհնեցէք զմեզ ուրեմն Ս. Հայր,
առնել և զօրանալ ուսմամբ և դաստի-
արակութեամբ 'ի փառս Աստուծոյ,
'ի պարծանս Ս. Ուխտիս և յօգուտ
Թշուառ եւ տառապակիր Ազգու-
թեանս։

Ա-ԷՊԷՍ Կարապետեան
Կ. Պոլսեցի
Աշ. Ծառ. Վարժ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ուսմանց միակ և գլխաւոր նպա-
տակն է ուսուցանել մարդոյ այն ա-
մենայն, որ հարկաւոր է նմա այս աշ-
խարհիս մէջ իբրեւ մարդ ապրելու
կամ կենցաղավարելու համար։ Ու-
սումն ոչ այլ ինչ է, բայց եթէ գի-
տութիւն և ուսանողութիւն անգի-
տակ իրաց եւ ամեն ուսմունք ունին

digitised by A.R.A.R.@